ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՅՐԵՆԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Դեռ Բուլղարիայում, որտեղից հայրենիք եմ ներգաղթել ծնողներիս հետ, երազում էի այն երջանիկ օրը, երբ բախտ կունենամ սովորել հայրենի դպրոցում։ Երբ մեր քարավանը հասավ Սովետական Հայաստան և մեզ տեղավորեցին Արաբկիր նորակառույց ավանում, ես անմիջապես հարցրի, թե որն է դպրոցը։ Ինձ ցույց տվին մի մեծ ու սպիտակ շենք, որ բարձր ու գեղեցիկ էր իրեն շրջապատող բոլոր տներից։

Ես անմիջապես գնացի դպրոց և հայտնեցի իմ բուռն ցանկությունը դպրոցում սովորելու մասին։ Այստեղ ինձ սիրով ու գորովանքով շրջապատեցին դպրոցի դասատուները։ Դպրոցի դիրեկցիան ընդառաջեց իմ ցանկությանը և ընդունեց ինձ 6-րդ դասարան։

Այնուհետև ամեն օր գնում էի դպրոց, ուր վերանորոգվում էին լուսավոր դասասենյակներն ու միջանցքները։ Ամեն անգամ հրճվում էր իմ սիրտը այն մտքից, որ պետք է սովորեմ այս դպրոցում։ Ես անհամբեր սպասում էի այն օրվան, երբ կհնչի զանգը ու ինձ դպրոց կկանչի։

Այսօր իրականացավ իմ տենչանքը։ Սովորելով մայր Հայաստանի հիանալի դպրոցներից մեկում, ես կլարեմ իմ ջանքերը, որպեսզի աշխատասիրությամբ հատուցեմ այն ջերմ հոգատարությանը, որով շրջապատել են մեզ, արտասահմանից ներգաղթած մանուկներիս մեր կառավարությունն ու սիրելի Ստալինը։

ԳԵՏՐՈՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ